

ՑԱՆԿ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Հղումը
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Բարելավել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը, կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները՝ տարբերակելով համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը:</p>	<p>Պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների տրամադրման նոր մեխանիզմների անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ստեղծում այն հաշվով, որ դրանք լինեն ավելի նպատակային, հաշվի առնեն համայնքների միջև առկա օբյեկտիվ տարբերությունները՝ հատկապես եկամտային ունակությունների և ծախսային կարիքների մասով</p> <p>Գնահատել սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները, պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, չափորոշիչների ու նորմատիվների ներմուծմամբ պայմանավորված դրանց դինամիկան</p>	<p>Եվրոպայի խորհուրդ – Հայաստանի Հանրապետության կառավարություն Գործողությունների պլան՝ կապված տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների հետ (խնդիր 1) ԱՄՆ ՄՁԳ՝ Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագիր (թիվ AAG-111-G-13-001)</p>
	<p>2. Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի մեկնարկ</p>	<p>- խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների իրականացում</p> <p>- վարչատարածքային բարեփոխման իրականացմանն անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում և դրանց քննարկում ՀՀ կառավարությունում</p>	<p>ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշում</p>
<p>3. Քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի, ինչպես նաև համայնքային ենթակայության հիմնարկների կառուցվածքի և կազմի</p>	<p>Քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքացուցակների ու համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վերաբերյալ տեղեկատվական բազայի ձևավորում</p>	<p>ՀՀ կառավարության 16.05.2013թ. N 515-Ա որոշում, կետ 3.5.1, ՀՀ կառավարության 27.06.2013թ. N 661-Ն որոշում</p>	

	<p>օպտիմալ մոդելների մշակում</p>	<p>Քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի աշխատակիցների առավելագույն թվաքանակը սահմանելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարությանը, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվի օպտիմալացման վերաբերյալ մեթոդական առաջարկությունների մշակում</p>	
		<p>Քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների նվազագույն աշխատավարձերի բարձրացմամբ պայմանավորված՝ 2014 թվականին անհրաժեշտ քայլերի ձեռնարկում</p>	

ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ա.Գևորգյան